

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՐՋՈՅԱՆ ՆԱՐԻՆԵ ԶՈՐԻԿԻ

Մեծաթուր գրեցը եւ իր «Գիրք ՂԱՏԱՍՏԱՆԻ» ԵՐԿԸ

**ԻՇ.00.01- «Կրոնի տեսություն և պատմություն (կրոնագիտություն)»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
МИРЗОЯН НАРИНЕ ЗОРИКОВНА**

МХИТАР ГОШ И ЕГО «СУДЕБНИК» («ГИРК ДАТАСТАНИ»)

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата
исторических наук по специальности
25.00.01 «Теория и история религии (религиоведение)»**


ЕРЕВАН – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:
Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ռ. Հ. Վարդանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Մ. (Է.) Ա. Շիրինյան**

պատմական գիտությունների թեկնածու
Գ. Ա. Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Մատենադարան. Մեսրոպ
Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. դեկտեմբերի 24-ին՝ ժամը 12:00-ին,
ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի 068 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ ք. Երևան 0025, Արուսյան 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2015 թ. նոյեմբերի 23-ին:
Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  **Ա. Յ. Բալյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель: доктор исторических наук,
профессор **Р. Ов. Варданян**

Официальные оппоненты: доктор исторических наук,
профессор **М. (Э.) С. Ширинян**

кандидат исторических наук
Г. А. Арутюнян

Защита диссертации состоится 24-го декабря 2015 г., в 12:00 часов на заседании
специализированного совета 068 в Ереванском государственном университете.

Адрес: г. Ереван 0025, Абовяна, 52, ЕГУ, 6-ой корпус, актовъй зал.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 23-го ноября 2015 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат исторических наук, доцент:



А. Ю. Баян

ԱՅԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունն ու գիտական նշանակությունը: Հայ միջնադարյան միտքն իր ծաղկմանը հասավ հայ մատենագրության ամենակարկառուն երախտավորներից մեկի՝ օրենսդիր և իրավագետ, եկեղեցական, հասարակական-քաղաքական, պետական գործիչ, մանկավարժ, առակագիր և աստվածաբան Մխիթար Գոշի գործունեության շնորհիվ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու¹ այս նվիրական ներկայացուցիչն ապրել և ստեղծագործել է 12-րդ դարի 30-ական թվականներից մինչև 13-րդ դարի սկիզբ՝ ռազմական, քաղաքական ու տնտեսական անբարենպաստ ժամանակաշրջանում: Նրա գործունեությունն ամբողջությամբ ուղղված էր ազգային ինքնության պահպանմանը, հայոց մշակույթի զարգացմանը և հայոց պետականության վերականգնմանը: Այդ իսկ պատճառով առ այսօր Մխիթար Գոշի անձը և նրա թողած գրական ժառանգությունը մշտապես եղել են հայ և օտարազգի բազում ուսումնասիրողների ուշադրության կիզակետում:

Մխիթար Գոշի անձին և բազմաբովանդակ մատենագրական ժառանգությանը, հատկապես «Գիրք դատաստանի» (հայագիտության մեջ հանդիպում է «Ղատաստանագիրք» անվամբ)² երկասիրությանը ևս մեկ անգամ անդրադառնալն ունի առանձնահատուկ կարևորություն և արդիական է, քանզի գիտական ճանաչողության տեսակետից այն դեռևս ամբողջովին ուսումնասիրված չէ: Առանձնակի և համակողմանի ներկայացված չեն քննարկվող ժամանակաշրջանում Մխիթար Գոշի կենսագրական որոշ տվյալներ՝ պայմանավորված առկա կցկտուր տեղեկություններով: Վերոնշյալ հարցերի, ինչպես նաև Գոշի գրական ժառանգության ամբողջական բնութագիրը և «Ղատաստանագիրքի» պատմաբանասիրական, կրոնական համապարփակ վերլուծությունն ու եկեղեցափրավական ճշգրիտ համակարգն էլ դարձել է մեր ատենախոսության առանցքը:

Նախօրինակը չունեցող հայոց առաջին դատաստանագիրքը ստեղծվել է իր ժամանակաշրջանի հրամայականով, ուստի շատ կարևոր էր Մխիթար Գոշի ապրած ժամանակաշրջանի ուսումնասիրությունը «Ղատաստանագիրքի» ստեղծման շարժառիթների մասին տեղեկանալու տեսակետից. անհրաժեշտ էր ցույց տալ, թե ինչ միջավայրում են ձևավորվել Գոշի հայացքները, և որքանով է օրենսգիրքն արտացոլել ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունները:

¹ Ատենախոսության մեջ մենք պահպանել ենք մասնագիտական համատեքստում առավել ընդունված և կիրառելի գրության ձևը, այսինքն՝ բոլոր բաղադրիչները գրել ենք մեծատառով, թեև հայերենի կանոնների համաձայն՝ բաղադրյալ հատուկ անունների դեպքում միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:

² Մեր ուսումնասիրության մեջ կիրառվել են երկի անվան երկու տարբերակները՝ «Գիրք դատաստանի» կամ «Ղատաստանագիրք». «Գիրք դատաստանի» անվանաձևը բնագրային է, իսկ «Ղատաստանագիրքը»՝ հայագիտության մեջ առավել տարածված և կիրառելի տարբերակ: Ուստի գրության բնագրային տարբերակը մենք պահպանել ենք միայն վերնագրում և առանձնահատուկ դրվագներում, իսկ ամբողջ շարադրանքում, էլնելով նաև միօրինակության սկզբունքներից, գործածել ենք «Ղատաստանագիրք» անվանաձևը:

«Դատաստանագիրքը» հայ միջնադարյան մատենագրության ամենաարժեքավոր հուշարձաններից մեկն է, անգնահատելի աղբյուր միջնադարյան հայոց պատմության և իրավունքի ուսումնասիրման համար, հասարակական դասերին և նրանց փոխհարաբերություններին, սոցիալ-տնտեսական և շատ այլ բնագավառներին վերաբերող բազմազան հարցերի ու խնդիրների քննարկման ու լուծման համար: Հայ ժողովրդի կյանքում և Հայոց Եկեղեցու պատմության մեջ տեղի ունեցած իրադարձությունների քննական և քաղաքական ու աշխարհայացքային հիմքերի արժևորումը եկեղեցաբանական ու պատմագիտական մեծ նշանակություն ունի, քանի որ այն միտված է եկեղեցական կառույցի՝ որպես ազգային միասնականությունն ապահովող գործոններից մեկի համակողմանի գիտական ուսումնասիրությանը: Քննարկվող հիմնահարցերը մեծապես կարևորվել են նաև այն տեսանկյունից, որ ներեկեղեցական և միջեկեղեցական իրադարձություններն ուղղակիորեն առնչվում են հայ ժողովրդի ինքնության, ինքնագիտակցության և հոգեկերտվածքի պատմագործառական դրսևորման ու զարգացման հիմնախնդիրներին: Ուստի բնական է, որ գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչներ՝ աստվածաբաններ, եկեղեցաբաններ, իրավաբաններ, բանասերներ, պատմաբաններ, մանկավարժներ, հասարակագետներ և բժիշկներ, մեծ հետաքրքրություն են ցուցաբերել այս օրենսգրքի հանդեպ:

Լյսպիսով՝ հրապարակային պաշտպանության ներկայացվող սույն ատենախոսությունը նվիրված է մի կարևոր և սակավ ուսումնասիրված ժամանակաշրջանում հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչ Մխիթար Գոշի կյանքին, գործունեությանը և նրա գլուխգործոց «Պիրք դատաստանի» կամ «Դատաստանագիրք» երկի ուսումնասիրմանը՝ նորովի և համակողմանի լուսաբանմամբ, ինչպես նաև նախկինում ձևավորված մոտեցումների վերարժևորմամբ կամ այլ տեսակետների ներկայացմամբ:

Ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները: Թեև ատենախոսության ուսումնասիրության հիմնական **առարկան** Մխիթար Գոշի կենսագրությունն է, մատենագրական վաստակը և «Դատաստանագրքի» համապարփակ ուսումնասիրությունը, անդրադարձ է կատարվել նաև առնչվող մի շարք կարևոր հարցերի: Նախքան կենսագրական տվյալներ ներկայացնելը ընդգծել ենք Մխիթար Գոշի դերակատարությունը իր ապրած ժամանակաշրջանում: Նոր փաստարկների հիման վրա քննության են առնվել նաև նրա ազգային պատկանելության շուրջ եղած տեսակետները: Առանցք ունենալով «Դատաստանագրքի» ուսումնասիրությունը՝ տրվել է Գոշի գրական ժառանգության ամբողջական և համակողմանի բնութագիրը՝ մատենագրության տարբեր ճյուղերի բաժանումով և ժամանակագրական հաջորդականությամբ: Պատմաբանասիրական և եկեղեցափրավական վերլուծության զուգորդմամբ հանգամանալից և ժամանակագրական կարգով ներկայացվել են բոլոր երկերի գրչագրերը, ուսումնասիրությունները և հրատարակությունները: Գրական ժառանգության համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում լրացնելու որոշ կենսագրական փաստերի

բացակայությունը՝ շեշտելով Մխիթար Գոշի անձը և իրավաբաղաքական, տնտեսական, սոցիալական-հասարակական և աստվածաբանական հայացքները: Հիմնվելով միայն մեկ գլխավոր պատմական փաստի առկայության՝ Մխիթար Գոշի մահվան (1213 թ.) թվականի և հայոց պատմիչ, դեպքերի ժամանակակից Կիրակոս Գանձակեցու վկայությունների վրա՝ Գոշի երկերի ու պատմական տեղեկությունների համադրությամբ հնարավոր է դարձել վերականգնելու ու թվագրելու կենսագրական առանձնահատուկ դրվագներ: Առկա տոմարական տվյալների համադրմամբ ներկայացվել է նաև «Ղատաստանագրքի» ստեղծման թվականը՝ քննության առնելով խնդրո առարկա հարցի շուրջ հայագիտության մեջ եղած տեսակետները: Կազմվել է նաև «Ղատաստանագրքի» եկեղեցաիրավական համակարգը՝ ըստ հայ միջնադարյան իրավունքի:

Ատենախոսության ուսումնասիրության **նպատակն** է քննվող ժամանակաշրջանում Մխիթար Գոշին ներկայացնել որպես հայ մատենագրության խոշորագույն ներկայացուցիչ և հայ միջնադարյան իրավունքի երախտավոր, իսկ «Ղատաստանագիրքը»՝ որպես հայ իրավաբանական մտքի գլուխգործոց: Ուստի առանձնացրել ենք հետևյալ **խնդիրները**.

1. Մխիթար Գոշի կենսագրության ու երկասիրությունների ուսումնասիրության բնագավառում արդեն հայտնի փաստերը հարստացնել նորովի մեկնաբանությամբ,
2. ձեռագրերի, հիշատակարանների, երկասիրությունների պատմահամեմատական, քննական վերլուծության և գիտական գրականության մանրագնին հետազոտության միջոցով, ինչպես նաև Գոշի մասնակցած ժողովների քննարկմամբ ընդգծել նրա դերակատարությունը ազգային ինքնության պահպանման և Հայոց Եկեղեցու հզորացման գործում,
3. մատենագրական ժառանգության առանձնացմամբ Մխիթար Գոշին ներկայացնել որպես բազմաթվական դակ և բազմավաստակ մտավորական և առանձին-առանձին հիմնավորել երկերի հեղինակային պատկանելության հարցերը,
4. միջնադարյան տարաբնույթ աղբյուրների քննական վերլուծությամբ ներկայացնել նաև տվյալ ժամանակաշրջանում տիրող ներեկեղեցական, միջեկեղեցական և ներքաղաքական իրադրությունը,
5. Գոշի՝ ներազգային և միջազգային իրադարձություններով ուղեկցվող հասարակական և մշակութային գործունեությանը նվիրված ուսումնասիրությամբ լույս սփռել անցյալի բարդ ու ներհակ մի շարք երևույթների իրատեսական գնահատումների վրա,
6. պատմահամեմատական հիմնարար սկզբունքներով եկեղեցաբանության և աստվածաբանության դիրքերից համակողմանի արժևորել նրա երկերը՝ հատկապես դավանաբանական և մեկնողական բնույթի,
7. սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համադրական վերլուծությամբ ընդգծել Հայոց Եկեղեցու դավանաբանական էությունը բնութագրող

կարևորագույն այնպիսի երևույթ, ինչպիսին կաթոլիկ- միաբարական շարժման նկատմամբ վերաբերմունքն է, դիտարկել և արժևորել Հայոց Եկեղեցու դիրքորոշումը և վեր հանել այդ գործընթացում տեղական եկեղեցական ժողովների տեղը, դերը և նշանակությունը,

8. սկզբնաղբյուրների և գրականության տեսության քննական վերլուծությամբ լրացնել Գոշի կենսագրական տվյալները, հատկապես ճշգրտել ծննդյան մոտավոր թվականը, սպասավորության տարիները և գործունեությունը,
9. «Ղատաստանագրքի» ստեղծման շարժառիթները և նպատակները ներկայացնել նաև այլ հայեցակետից. ընդգծել երկի գրման գլխավոր պատճառը և նպատակը, այն է՝ ազգային ինքնության պահպանման միջոցով հայոց պետականության վերականգնում,
10. տոմարական եղանակների միջոցով հաստատել և հիմնավորել «Ղատաստանագրքի» ստեղծման թվականը,
11. բնագրերի զուգադրական վերլուծությամբ նորովի անդրադառնալ «Ղատաստանագրքի» աղբյուրներին,
12. սկզբնաղբյուրների և գրչագրերի ուսումնասիրմամբ ընդգծել «Ղատաստանագրքի» գործադրման հիմքերը, կարևորությունը և արդիականությունը,
13. հայկական գաղթավայրերի համակողմանի հետազոտության արդյունքում ներկայացնել այն վայրերը, որտեղ կիրառվել է «Ղատաստանագիրքը»
14. «Ղատաստանագրքի» խմբագրությունները և թարգմանությունները նորովի լուսաբանել ըստ գրչագրերի,
15. կատարել «Ղատաստանագրքի» բովանդակային վերլուծություն, ցույց տալ այնտեղ արժարժվող իրավաբանական և աստվածաբանական հարցերի շրջանակը, ինչպես նաև իրավունքի տեսության հիմնահարցերի, իրավական նյութերի ուսումնասիրմամբ «Ղատաստանագրքի» համակարգը ներկայացնել որպես եկեղեցափրավական համակարգ, ինչը դուրս էր մնացել նախորդ ուսումնասիրողների հետազոտության շրջանակից,
16. «Ղատաստանագրքի» իրավական համակարգի՝ որպես ամենաբարդ հարցերից մեկի պարզաբանման միջոցով առանձնացնել երկի ճշգրիտ՝ եկեղեցափրավական կառուցվածքը և դասակարգել իրավանորմերն ըստ միջնադարյան իրավունքի:

Թեմայի մշակվածությունը, աշխատանքի գիտական նորոյթը և գործնական

նշանակությունը: Ատենախոսությունն իր հիմնական հարցադրումներով ամբողջացնում է ինչպես թեմային առնչվող կողմերը, այնպես էլ դրանց շուրջ իրատարակված պատմական, աստվածաբանական, իրավաբանական գրեթե բոլոր ուսումնասիրությունները՝ նորովի և համակողմանի լուսաբանմամբ, նախկինում ձևավորված մոտեցումների վերարժևորմամբ կամ այլ տեսակետների ներկայացմամբ:

Սույն ուսումնասիրությունն ընդգրկում է հետևյալ **գիտական նորոյթները**.

1. Մխիթար Գոշի մասին առկա մատենագրական աղբյուրների և ուսումնասիրությունների քննության արդյունքում մատնանշվել են մի շարք բացթողումներ, վերականգնվել, ճշգրտվել և թվագրվել նրա որոշ կենսագրական դրվագներ՝
 - Մխիթար Գոշի ծննդյան մոտավոր թվականը, այն է՝ 1133/1134 թթ.,
 - առաջին անգամ նշվում են կուսակրոն քահանա դառնալու տարիքը (14 տարեկան), քահանայական տարիները, վարդապետության տարիները,
 - Կիլիկիայի Սև լեռան վանքեր մեկնելու (1161/1162) տարեթիվը,
 - հայրենիք՝ Գանձակ, վերադառնալու տարեթիվը (1169 թ.),
 - Գետիկ վանքում հաստատվելու տարեթիվը (1186 թ.),
 - առաջին անգամ հիմնավորվել է Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման տարեթիվը (1197 թ.),
 - առաջին անգամ տոմարական եղանակների միջոցով հիմնավորվել է Մխիթար Գոշի մահվան թվականը՝ 1213 թ.:
2. Առաջին անգամ ավանդությունների վերհանմամբ Մխիթար Գոշը ներկայացվել է որպես ժամանակակիցների կողմից ճանաչված սուրբ և սրբակենցաղ եկեղեցական գործիչ:
3. Համապարփակ ձևով և նորովի մեկնաբանմամբ ներկայացվել է Մխիթար Գոշի բազմաբովանդակ և բազմաժանր գրական ժառանգությունը՝ զուգահեռաբար տալով նաև բոլոր մատենագրական աղբյուրները, ձեռագրերը և հետազոտողների ուսումնասիրությունները:
4. Ի մի են բերվել «Ղատաստանագրքի» վերաբերյալ մատենագրական աղբյուրները, ճշգրտվել երկի ստեղծման տարեթիվը (1185 թ.)՝ տոմարական երեք համաժամանակյա թվականների հիման վրա:
5. Հիմնավորվել է, որ «Ղատաստանագիրքը» գրվել է Մխիթար Գոշի առաջարկությամբ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի բարձրագույն պատվերով, եղբայր Պողոսի և Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հորդորով և Հայր Հովսեփի հովանավորությամբ ու օժանդակությամբ՝ հակառակ այն գերակշռող տեսակետի, ըստ որի՝ քննարկվող օրենսգիրքը գրվել է Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի պատվերով:
6. Սկզբնաղբյուրների և գրչագրերի ուսումնասիրմամբ ընդգծվել են «Ղատաստանագրքի» գործադրության հիմքերը՝ հիմնվելով Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի նամակի վրա:
7. Իրավունքի տեսության հիմնահարցերի հետազոտությամբ առաջին անգամ առանձնացվել է «Ղատաստանագրքի» եկեղեցափրավական համակարգը՝ առաջնորդվելով Մխիթար Գոշի ժամանակաշրջանի՝ միջնադարյան իրավունքով՝ հակառակ այն ուսումնասիրողների տեսակետի, որոնք

Եկեղեցական իրավունքը չեն ներկայացրել որպես առանձին ճյուղ, քանի որ միայն առաջնորդվել են արդի իրավական համակարգի չափանիշներով, օր.՝ ամուսնաընտանեկան իրավանորմերը ներկայացվել են քաղաքացիական իրավունքի շրջանակներում: Բացի այդ՝ ուսումնասիրողների մեծ մասը խորհրդային ժամանակաշրջանի մտայնության կրող է, ուստի բնական է, որ եկեղեցական իրավունքը առանձին չէր ներկայացվի:

8. Առաջին անգամ անդրադարձ է կատարվել Մխիթար Գոշի էկումենիկ հայացքներին:

Մինչև վերջերս «Ղատաստանագիրքը» գործադրվել է հայկական գաղթավայրերում և իր վրա է սևեռում տարբեր բնագավառների մասնագետների ուշադրությունը: Ատենախոսությունը ներառում է բազում արդիական թեմաներ (էֆթանագիա, ծառահատում, եկեղեցաշինություն, կաշառակերություն, արհեստական հղիության ընդհատում և այլն):

Ատենախոսության ճանաչողական և **կիրառական նշանակությունն** այն է, որ առանձին դրույթներ կարող են օգտակար լինել հայոց եկեղեցական իրավունքի, հայկական գաղթավայրերի ուսումնասիրման տեսակետից և մեծ հետաքրքրություն առաջացնել բուհական կրթական համակարգում՝ պատմության, բանասիրության, աստվածաբանության, իրավաբանության, եկեղեցաբանության, հասարակագիտության, բժշկագիտության և ազգագրության շրջանակներում: Սույն աշխատանքը կարող է ունենալ նաև գիտագործնական նշանակություն. վերջինիս դրույթների լույսի ներքո կարող են ուսումնասիրվել Մխիթար Գոշի և նրա երկերի վերաբերյալ տարբեր հարցեր:

Ատենախոսության մեթոդաբանական սկզբունքները: Ատենախոսության ուսումնասիրման և շարադրման համար կիրառվել են պատմաբանասիրական, քննական, համադրական-գուգադրական, ինչպես նաև եկեղեցաբանական համակարգված վերլուծության **մեթոդները**՝ անաչառ հետազոտություն կատարելու սկզբունքով: Նորագույն՝ տոմարական ու տոնացույցային եղանակները ևս սույն ուսումնասիրության հիմնական մեթոդներից են: Աշխատանքում քննվել և արժևորվել են յուրաքանչյուր հարցի վերաբերյալ եղած փաստական նյութը, սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները, կատարվել են տոմարական հաշվարկներ, վերանայվել և վերարժևորվել են քննարկվող հիմնահարցերի հակասական և իրարամերձ հայեցակարգերն ու մոտեցումները, և քննական-համեմատական վերլուծությունների արդյունքում առաջարկվել են նոր լուծումներ:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի աստվածաբանության ամբիոնի նիստում: Քննարկված նյութը և առանձին դրույթներ առաջադրվել են հանրապետական գիտաժողովներում և սեմինար-քննարկումներում ներկայացված թեզիսներում և ելույթներում: Հրատարակված գիտական հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն: Առենախոսությունը պատրաստվել է ձեռագրերի, հիշատակարանների, հրատարակված բնագրերի, պատմագրական երկերի և հայերեն ու օտարալեզու ուսումնասիրությունների հիման վրա: Աղբյուրների տեսությունը ներկայացվում է թեմատիկ շարադրանքին համապատասխան: Ուսումնասիրությունը շարադրելիս գործածել ենք բոլոր **սկզբնաղբյուրները**, որոնք հնարավորություն են ընձեռել մեզ քննելու ոչ միայն Մխիթար Գոշի կյանքն ու գործունեությունը, այլև պատկերացում կազմելու նրա բազմաբնույթ գրավոր ժառանգության, հատկապես «Դատաստանագրքի» մասին:

Ուսումնասիրության առաջին գլխավոր սկզբնաղբյուրը Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն»³ աշխատությունն է: Նրան են հետևել հետագա պատմիչները և ուսումնասիրողները:

Կենսագրական տվյալների վերհանման համար հիմք են հանդիսացել Կիրակոս Գանձակեցու վերոնշյալ աշխատությունը, «Դատաստանագրքի» նախադրությունը⁴, Վարդան վարդապետ Բարձրբերդցու «Պատմութիւն տիեզերական»⁵ աշխատությունը, «Մեկնութիւն համառօտ մարգարէութեան Երեմիայի» աշխատության հիշատակարանները⁶, ժամանակագրություններն ու հիշատակարանները⁷, Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»⁸, Առաքել Դավրիժեցու «Պատմություն»⁹ աշխատությունը և նրա երկերը՝ «Թուղթ առ վրացիսն՝ յաղագս ուղղա-

³ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխ.՝ Վ. Ս. Օհանջանյանի, Երևան, 1961:

⁴ Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատ.՝ Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 1-25:

⁵ Մեծին Վարդանայ Բարձրբերդեցույ պատմութիւն տիեզերական, Մոսկուա, Ի տպարանի Լազարեան ձեմարանի արեւելեան լեզուաց, 1861, նաև Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, Ս. Ղազար, 1862:

⁶ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, հտ. Ա, նաև ՄՄ ձեռ. Հ^մ 2606, ք.255ա-256բ:

⁷ 13-րդ դարում Ստեփանոս եպիսկոպոսի հեղինակած տարեգրությունը (տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 8481, ք. 205բ), 17-րդ դարում Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը (տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հտ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956), «Դատաստանագրքի» Նախադրության հիշատակարանը (տե՛ս Մխիթար Գոշ, «Գիրք դատաստանի», Նախադրութիւն, էջ 24), Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Յոբայ արարեալ Վանական Վարդապետի եւ Լուծմունց» աշխատության հիշատակարանը (տե՛ս ԺԵ դարի հայերէն ձեռագրերի Յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկեան, մասն Ա, Երևան, 1950), Տաշեան Յ., Մայր ցուցակ ձեռագրաց, Վիեննա, 1895, 18-րդ դարի մի ժամանակագրություն (տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 6691, ք. 4ա), մի նոտրգիր համառօտ ժամանակագրություն (տե՛ս ժամանակագրություն (XI-XVIII դդ.), աշխատ.՝ Ն. եպս. Պողարյանի, «Բանբեր Մատենադարանի», 1969, թիվ 9), Հայսմավուրբային տեղեկություն (տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 8147), Մխիթար Գոշի նամակը հայոց կաթողիկոսին (տե՛ս Չմամառի միաբանության ձեռ. Հ^մ 180, ք. 255ա-255բ, նաև Մեսրոպ վ. Քէշիշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Չմամառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 414-426, «Մատենագիրք հայոց», Ի. Հատոր, Գիրք Բ, Մխիթար Գոշ, Երևան, 2014, էջ 605-612):

⁸ Տե՛ս Թուղթ ընդհանրական, արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեսուն Ներսիսի Շնորհալույ, Ս. Էջմիածին, 1865, տե՛ս նաև Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխ.՝ Լ. Խաչատրյանի և Հ. Քյոսեյանի, Էջմիածին, 2003:

⁹ Տե՛ս Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցույ, Վաղարշապատ, 1896:

փառաբան հավատոյ»¹⁰ երկը, խոսքով Գանձակեցու վկայաբանությունը¹¹, «Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ժԲ դարու»¹² երկը: Գոշի կենսագրության, հատկապես գործունեության ուսումնասիրման համար օգտակար են նաև Նոր Գետիկի (այժմ՝ Գոշավանք) վանքի արձանագրությունները¹³: Աղբյուրագիտական մեծ արժեք ունի նաև Մ. Չամչյանցի «Հայոց պատմությունը»¹⁴:

Որպես հիմնական ուսումնասիրություններ՝ գործածել ենք «Ղատաստանագրքի» առաջին ուսումնասիրող և հրատարակող Վ. Բաստամյանցի¹⁵ և հաջորդ՝ Խ. Թորոսյանի¹⁶ կարևոր գործերը:

Վ. Բաստամյանցը «Ղատաստանագրքի» Բ խմբագրությունը, որը համարել է սկզբնական-հեղինակային բնագիր, իր ուսումնասիրության հետ միասին հրատարակել է հետևյալ խորագրով՝ «Մխիթարայ Գոշի Ղատաստանագիրք Հայոց»¹⁷: Բաստամյանցը բնագրին կցել է ընդարձակ ու արժեքավոր առաջաբան և իրավագիտական, պատմաբանասիրական ու բնագրագիտական բազմաթիվ ծանոթագրություններ:

¹⁰ Տե՛ս Թուղթ Մխիթար Վարդապետին, որ Գոշն կոչիւր, աշխ.՝ Տեր-Մկրտչյան Կ., «Արարատ», 1900, ԼԴ. տարի, հոկտեմբեր, էջ 497-504, 562-568, Նոյնի, «Արարատ», 1901, ԼԴ տարի, յունուար, էջ 55-61, 121-127, նաև՝ Մխիթար վարդապետ Գոշ, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան յաւատոյ, աշխ.՝ Պ. Մուրադյանի, «Գանձասար» աստվածաբանական հանդես, Գիրք Զ, Երևան, 1996, Նոյնի, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը, Ս. Էջմիածին, 2011, «Մատենագիրք հայոց», Ի. Հատոր, Գիրք Բ, Մխիթար Գոշ, Երեւան, 2014:

¹¹ Տեր-Մկրտչեան Գ., Վկայութիւն սրբոյն խոսքովու մեծ և փառաւորեալ որ կոչի նոր նահատակ, որ վկայեաց յաշխարհն Աղուանից ի մայրաքաղաքն որ կոչի Գանձակ, «Արարատ», 1896, դեկտ., թիվ 1-12, էջ 590-594, 1897, հունվար, էջ 37-41, նաև Հայոց նոր վկաները (1155-1843), աշխատ.՝ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903 թ., «Մատենագիրք հայոց», Ի. Հատոր, Գիրք Բ, Մխիթար Գոշ, Երեւան, 2014, էջ 574-582:

¹² Ալիշան Ղ., Հայապատում, հտ. Բ, Վենետիկ, 1901, սյուն 338-353:

¹³ Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ VI, կազմեցին՝ Ս. Ա. Ավագյանը, Հռ. Ջանփոլադյանը, Երևան, 1977, էջ 62-107, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց՝ Ե. Լալայան, Թիֆլիս, 1915, էջ 151, Եղիազարյան Հ., Նոր Գետիկ վանք կամ Գոշավանք, «Էջմիածին», Երևան, 1959 թ., թիվ 1-6, էջ 46-58, Նոյնի, թիվ 7-12, էջ 51-55, Սարգիս վրդ. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տիֆլիս, 1848, էջ 136-145, Մեսրոպ արք. Սմբատյանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայագիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 172-176, Հարությունյան Ի., Գոշավանք կամ Նոր Գետիկ, «Ազգագրական հանդես», Ժ գիրք, Թիֆլիս, 1903, էջ 5-38, Մակար եպս. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 343-356, «Արաքս» գրական եւ գեղարվեստական հանդես, Գիրք Բ, չորրորդ տարի, դեկտեմբեր, Ս. Պետերբուրգ, 1892, էջ 41-42, Ջանփոլադյան Հ., Մխիթար Գոշը և Նոր Գետիկի վանքը, հտ.Ա, Երևան, 1948, էջ 117-166, էփրիկյան Հ. Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հտ. Ա, Վենետիկ, 1903-1905, փմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, Ա. Պետերբուրգ, 1913, Գարեգին արք. Հովսեփյանց, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ա, Երուսաղեմ, 1935:

¹⁴ Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հտ. Գ, Երևան, 1984 (վերահրատ.):

¹⁵ Մխիթարայ Գոշի Ղատաստանագիրք Հայոց, իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան Ժ. վարդապետի Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880:

¹⁶ Մխիթար Գոշ, Գիրք Ղատաստանի, Երևան, 1975:

¹⁷ Մխիթարայ Գոշի Ղատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880:

«Դատաստանագրքի» ձեռագրերին և բնագրային առանձնահատկություններին անդրադարձել է Խ. Թորոպյանը¹⁸: Վերջինս, ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի համարակալության, բերել է Բաստամյանցի օգտագործած ձեռագրերի համարները՝ հինը՝ Հ^մ 488, Հ^մ 489, Հ^մ 490, Հ^մ 492, Հ^մ 749, նորը՝ Հ^մ 485, Հ^մ 209, Հ^մ 486, Հ^մ 488, Հ^մ 657, և Կարապետ եպիսկոպոսի օրինակը՝ Հ^մ 2593-ը¹⁹:

Հաջորդ ուսումնասիրողը, որ հատկապես անդրադարձել է «Դատաստանագրքի» ձեռագրերի ու նրանց խմբավորման հարցին, Կարստն է: Վերջինս թվարկում է Ս. Էջմիածնում գտնվող հետևյալ թվահամարի ձեռագրերը՝ Հ^մ 488, Հ^մ 489, Հ^մ 490, Հ^մ 492 և Հ^մ 749: Նա նշում է նաև, որ Սինոդի մատենադարանում ևս մեկ օրինակ կա: Սրանցից ամենահինը, ըստ Կարստի, Հ^մ 492-ն է՝ 1295 թ.-ից: Կարստը մատնանշում է նաև Վենետիկի Հ^մ 1237 ձեռագիրը²⁰, Հ^մ 214, Հ^մ 368, Հ^մ 434, Հ^մ 451, Հ^մ 590, Հ^մ 993, Հ^մ 1449 ձեռագրերը, Վիեննայի Հ^մ 205 ձեռագիրը, որը, ինչպես ինքն է կարծում, համապատասխանում է Էջմիածնի Հ^մ 492 ձեռագրին: Բացի ձեռագրերի, ձեռագրախմբերի մասին խոսելուց՝ Կարստը անդրադարձել է նաև Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» ծագման և հորինման հանգամանքների, ինչպես նաև արժեքի մասին: Նա ձեռագրերի մասին խոսելիս հիմնվել է Վ. Բաստամյանցի տեսակետների վրա, սակայն անդրադարձել է ձեռագրախմբերին, ինչին Բաստամյանցը գրեթե չի անդրադարձել:

«Դատաստանագրքի» ձեռագրերին և մի շարք կարևոր հարցերին է անդրադարձել նաև Մխիթարյան հայրերից Վ. Հացունին²¹:

«Դատաստանագրքի» հետազոտությամբ է զբաղվել նաև Ղ. Ալիշանը: Նախ նա խոսել է Լամբրոնացու և Գոշի աշխատությունների մասին՝ նշելով, որ դրանք տարբեր գործեր են. Լամբրոնացունը թարգմանություն է, «օրենսդրությունք» կամ «օրինաց գիրք», ինչպես ինքն է անվանում, իսկ Մխիթար Գոշինը՝ դատաստանագիրք: Ըստ Ալիշանի՝ Գոշն իր «Դատաստանագիրքը» սկսել է գրել 1184 թ. և նույն թվականին էլ ավարտել է²²:

Ինչպես արդեն նշվել է, Ղ. Ալիշանը Վենետիկի Սբ. Ղազարի ձեռագիրը, համարել է Մխիթար Գոշի ձեռքով գրված: Այս տեսակետը նա պաշտպանել է առանձին հոդվածով՝ ձեռագիրը համարելով գրված «իւրոյին ձեռնագիր գրովքն» կամ «նախօրինակ» և ապա Գոշի վերջին հիշատակարանն անվանելով «*ինքնագիր յիշատակարան հեղինակին, բուն իր ձեռք գրածէն օրինակուած, որ պահուի մեր քով*»: Ալիշանը, ինչպես Մխիթարյանները, հիմնվում էր «*Փառք Փրկչին մերոյ Յիսուսի, ընդ նմին Հօր եւ Հղօղոյն, որ ետ զդադարումն աստանօր տալ գրոցս դատաստանի....*» հիշատակարանի վրա²³:

¹⁸ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Երևան, 1975:

¹⁹ Նույն տեղում, էջ ԾԱ:

²⁰ Այն, ըստ Ղ. Ալիշանի, 1184 թ.-ից է՝ հենց Մխիթար Գոշի ձեռքինը:

²¹ Հացունի Վ., Դատաստանագիրք Մխիթար Գոշի եւ հնագոյն օրինակները, «Բազմավէպ», Վենետիկ, 1942, յունուար-դեկտեմբեր, էջ 4-9:

²² Ալիշան Ղ., Մարաշու վանքին Դատաստանագիրքը, «Բազմավէպ», Վենետիկ, 1848, էջ 40-41:

²³ Ալիշան Ղ., Յաղագս իսկագիր և նախագաղափար օրինակի գրոցն Դատաստանի Մխիթարայ Գոշի, «Բազմավէպ», Վենետիկ, 1848, էջ 117-122:

Ղ. Ալիշանի այս տեսակետը հերքել են Վ. Բաստամյանցը, Վ. Հացունին և Հ. Ոսկյանը: Վերջինս ոչ միայն հողվածներում, այլև «Մատենագրական քննութիւններ» աշխատության մեջ անդրադարձել է Մխիթար Գոշի կյանքին, աշխատություններին և «Դատաստանագրքի» ձեռագրերին²⁴:

Ն. Ալիսյան²⁵ իր հողվածներից մեկում ջանացել է հիմնավորել, որ «Դատաստանագրքի» հեղինակը Մխիթար Գոշը չէ:

«Դատաստանագրքի» ուսումնասիրությամբ է զբաղվել նաև Խ. Սամուելյանը: Իր «Հին հայ իրավունքի պատմությունը» գրքում վերջինս անդրադառնում է Մխիթար Գոշի կյանքի վերաբերյալ որոշ հարցերին, ապա «Դատաստանագրքին»²⁶: Նա իր «Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրավունքը» գրքում՝ առաջին մասում, մեծ տեղ է հատկացնում հայոց իրավունքի պատմությանը՝ փորձելով լուսաբանել Մխիթար Գոշի օգտագործած աղբյուրների հարցը: Իր այս աշխատության մեջ նա խոսել է միայն դատավարության, դատակազմության և քաղաքացիական իրավունքի մասին²⁷:

Ա. Գ. Սուքիասյանն իր «Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը» գրքում շեշտում է «Դատաստանագրքի» պատմական և իրավական նշանակությունը, համառոտակիորեն անդրադառնում Գոշի ապրած ժամանակաշրջանին, ապա «Դատաստանագրքի» իրավական ճյուղերին: Սուքիասյանը «Դատաստանագրքի» պատմաբանասիրական վերլուծությունը չի կատարել²⁸:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի ռուսերեն թարգմանությունը հրատարակել է Ա. Ա. Պապովյանը Երևանում 1954 թ. հետևյալ խորագրով՝ ««Армянский судебник» Мхитара Гоша, перевод с древнеармянского А. Паповяна»²⁹:

«Դատաստանագրքի» և «Կանոնագիրք հայոց» ժողովածուի միջև եղած կապին է անդրադարձել Ս. Տիգրանյանը³⁰: Վերջինս հիմնվել է Վ. Բաստամյանցի տեսակետների վրա³¹:

«Դատաստանագրքի» պատմական և դավանաբանական նշանակությանն է անդրադարձել Ս.Ս. Արծրունին իր «Историко-догматическое значение «Судебника» Мхитара Гоша» գրքում, որը հրատարակվել է Թիֆլիսում 1890 թ.³²:

Գ. Զարբիանայանը ևս մեծ տեղ է հատկացրել Գոշի կենսագրությանը, երկասիրություններին, հատկապես «Դատաստանագրքին»³³:

²⁴ Ոսկեան Հ., Մատենագրական քննութիւններ, Վիեննա, 1926, էջ 154-155:

²⁵ Ալիսյան Ն., Հ. Յովսէփ կարգաց վարժապետ «Հայոց դատաստանագրքի» իսկական հեղինակը, «Ալօս», Պեյրուբ, 1944, էջ 105:

²⁶ Սամուէլեան Խ., Հին հայ իրավունքի պատմութիւնը, Երևան, 1939, հտ. Ա, էջ 75-90:

²⁷ Սամուէլեան Խ., Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու Հին հայոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա, 1911:

²⁸ Սուքիասյան Ա. Գ., Մխիթար Գոշը և «Հայոց «Դատաստանագիրքը»», Երևան, 1965 թ.:

²⁹ Армянский Судебник Мхитара Гоша, перевод с древнеармянского А. А. Паповяна, вступительная статья и примечания Б. М. Арутюняна, Ереван, 1954.

³⁰ Тигранян С., Судебная книга Мхитара и Книга канонов, Тифлис, 1925.

³¹ Там же, с. 62.

³² Арцруни С. М., Историко-догматическое значение «Судебника» Мхитара Гоша, Тифлис, 1890:

³³ Զարբիանայան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեանց, հտ. Ա, Վենետիկ, 1865, էջ 558-568, Նույնի, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 686-698:

«Դատաստանագրքի» վերաբերյալ որոշ տեղեկություններ է բերում Ա. Ջամինյանը իր «Հայ գրականության պատմություն»-ը գրքում: Նա հակիրճ անդրադառնում է Մխիթար Գոշի կենսագրությանը, ապա նաև գործերին³⁴:

«Դատաստանագրքի» լույս տեսնելուց առաջ Խ. Թորոսյանը երեք հոդված³⁵ էր նվիրել երկասիրությանը:

«Դատաստանագրքի» հետ կապված մի շարք հարցերի մասին Թորոսյանի առաջին և երկրորդ հոդվածների վերաբերյալ ընդարձակ քննադատականով հանդես է եկել Է. Պիվազյանը³⁶: Հակառակ Խ. Թորոսյանի՝ Պիվազյանը փորձում էր ապացուցել, որ 1184 թ. երկն արդեն ավարտված չէր, որ այդ ժամանակ գրված էր միայն նախադրությունը: Սակայն Պիվազյանը ոչ մի փաստ չի բերել այն մասին, որ այն 1184 թ. չի ավարտվել, այլ միայն նշել է, որ Դատաստանագիրքը սկսել է գրվել 1184 թ. և որ այդ թվականին գրվելու ընթացքի մեջ է եղել:

Խ. Թորոսյանը Պիվազյանի քննադատությունն ամբողջությամբ մերժում է իր նոր հոդվածով³⁷:

1975 թ. Երևանում լույս է տեսնում Մխիթար Գոշի «Գիրք դատաստանին»՝ Խ. Թորոսյանի աշխատասիրությամբ³⁸: Վերջինս հրատարակում է «Դատաստանագրքի» Ա և Գ խմբագրությունները: Այս ձեռագրերի ուսումնասիրությունը և համեմատությունը Թորոսյանին բերեցին այն համոզման, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» գրչագրերը բաժանվում են երեք խմբի, որոնցից յուրաքանչյուրը առանձին խմբագրություն է ներկայացնում:

1987 թ. Երևանում հրատարակվեց Էմ. Պիվազյանի «Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բանասիրական քննություն» մենագրությունը³⁹: Ուսումնասիրության մեջ քննության են ենթարկված «Դատաստանագրքի» բանասիրական հարցերը՝ հնագույն ձեռագրերի տվյալները, աղբյուրների օգտագործման եղանակները, խմբագրությունները, նրանց փոխհարաբերությունները և այլ բանասիրական հարցեր:

Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» անգլերեն թարգմանությունը՝ «The Lawcode of Mxit'ar Gos'» խորագրով, հրատարակվել է Ամստերդամում 2000 թ.՝ Ռ. Թոմսոնի աշխատասիրությամբ և ծանոթագրություններով հանդերձ⁴⁰: Այս հրա-

³⁴ Ջամինյան Ա., Հայ գրականության պատմություն, Նոր-Նախիջեան, 1914, մաս Ա, էջ 185-187:

³⁵ Թորոսյան Խ., Երկու խմբագրություն Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1962, թիվ 6, էջ 57-74, Նույնի, Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձեռագրերն ու խմբագրությունները, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1963, թիվ 1, էջ 137-150, Նույնի, Մխիթար Գոշի Դատաստանագրքի առնչակցությունը Աստվածաշունչ գրոց հետ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» /հասարակական գիտությունների/, Երևան, 1963, թիվ 4, էջ 61-74:

³⁶ Պիվազյան Էմ., Մխիթար Գոշի Դատաստանագրքի խմբագրությունների մասին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1964, թիվ 1-2, էջ 193-212:

³⁷ Թորոսյան Խ., Մխիթար Գոշի Դատաստանագրքի հետ կապված մի քանի հարցերի մասին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1964, թիվ 4, էջ 149-170:

³⁸ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Երևան, 1975:

³⁹ Պիվազյան Էմ., Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բանասիրական քննություն, Երևան, 1987:

⁴⁰ The Lawcode of Mxit'ar Gos', translated with commentary and indices by Robert W. Thomson, Amsterdam-Atlanta, GA 2000.

տարակուսությունը ևս ընդգրկում է 251 հոդված: Այստեղ թմոսնը անդրադառնում է Մխիթար Գոշի կյանքին, երկը գրելու հանգամանքներին, Գոշի գործածած աղբյուրներին, նրա հայացքներին և երկի նախադրությամբ: Ակնհայտ է, որ Ռ. Թոմսոնը հանգամանակից ուսումնասիրել է «Ղատաստանագիրքը»՝ հենվելով Վ. Բաստանյանցի հրատարակության վրա: Հայագետը ոչ միայն անդրադարձել է «Ղատաստանագրքի» բանասիրական կողմին և մանրամասն ներկայացրել Մխիթար Գոշի կյանքը, երկի բնագիրը, այլև խոսել է նրան առնչվող բոլոր հարցերի շուրջ, մանրամասն հղել այն աղբյուրները, որոնք օգտագործել է Գոշը. նա առանձին ցուցակով նշել է բոլոր այն հոդվածները, որոնք բերված են այս կամ այն աղբյուրից:

Մխիթար Գոշի կենսագրական տվյալներին և «Ղատաստանագրքին» առնչվող որոշ խնդիրների լուծման համար կիրառել ենք նորագույն տոմարական և տոնացույցային եղանակներ: Այդ մեթոդների գործածման համար աշխատանքի շարադրման ընթացքում բանավոր հաղորդակցման միջոցով մեզ օգնել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Վարդանյանը: Հիմք են հանդիսացել նրա հեղինակած կարևոր ուսումնասիրությունները⁴¹:

Մխիթար Գոշի մեկնողական երկերի շարադրման համար գործածել ենք պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. (Է.) Շիրինյանի հետազոտական աշխատանքները⁴²:

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի և «Ղատաստանագրքի» առնչության ուսումնասիրության համար օգտվել ենք պատմական գիտությունների թեկնածու Գ. Ա. Հարությունյանի ատենախոսությունից⁴³:

2014 թ. երկար դադարից հետո կրկին անդրադարձ է կատարվել Մխիթար Գոշին «Մատենագիրք հայոց» երկհատույակում: Առաջին հատորում հակիրճ ակնարկ է արվել մատենագրական ժառանգության վերաբերյալ, իսկ երկրորդ հատորում առանձին-առանձին վերահրատարակվել են Գոշի երկերը՝ յուրաքանչյուրի վերաբերյալ ներածականով⁴⁴:

Այսպիսով՝ «Ղատաստանագիրքը» հայագիտության մեջ շատ, բայց ոչ խորքային ուսումնասիրված բազմաբնագավառ աշխատություն է և դեռ անսպառ ուսումնասիրության կարիք ունի: Թեև վերը նշված ուսումնասիրողները պատմաբանասիրական տեսակետից վերլուծել են «Ղատաստանագիրքը», սակայն որոշ հարցեր դեռևս լիարժեք պարզաբանված չեն, իսկ որոշ հարցեր էլ կարիք ունեն նորովի լուսաբանման:

⁴¹ Վարդանյան Ռ., Հայոց Տոնացույցը (4-18-րդ դդ.), Երևան, 1999, Նույնի, Հայոց տոմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը, Երևան, 1993:

⁴² Շիրինյան Մ. (Է.), Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական՝ դասական, ու բյուզանդական աղբյուրների բաղդատությամբ), Երևան, Ա. հ., 2005, էջ 364, Նույնի, Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում, «Աշտանակ» հայագիտական պարբերագիրք, թիվ 4, Երևան, 2000, էջ 36-64, Շիրինյան Մ. (Է.), Խաչատրյան Գ., Գիրք Պատճառաց, «Աշտանակ» հայագիտական պարբերագիրք, թիվ 7, Երևան, 2011, էջ 18-43:

⁴³ Հարությունյան Գ. Ա., Կանոնական բնագրերը և հայ եկեղեցական իրավունքի պատմության խնդիրները (V-VIII դարեր), Երևան, 2014 (անտիպ):

⁴⁴ «Մատենագիրք հայոց», ժԹ. հատոր, ժԲ. դար, Գիրք Ա., Մխիթար Գոշ, Երեւան, 2014, «Մատենագիրք հայոց», Ի. Հատոր, Գիրք Բ, Մխիթար Գոշ, Երեւան, 2014:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը բաղկացած է «Ներածությունից», երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, «Եզրակացություններից», «Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից» և «Հավելված» բաժիններից: Ենթագլուխների բաժանումը կատարվել է աշխատանքը համակարգված ձևով ներկայացնելու սկզբունքով, ինչի արդյունքում հաջողվել է խուսափել դրանց միջև արհեստական հավասարություն սահմանելուց և կրկնություններից:

Առաջին գլուխը՝ *Մտիթար Գոշի ԿՅԱՆՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ և ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ*, շարադրելիս օգտագործվել են հիմնականում սկզբնաղբյուրներ, եկեղեցաբանական վավերագրեր, պատմագիտական մենագրություններ ու հետազոտություններ՝ զուգահեռաբար ներկայացնելով նաև ուսումնասիրությունները:

Այս գլուխը նվիրված է Մխիթար Գոշի կենսագրությանը և մատենագրական վաստակին: Առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից՝ 1. «Մխիթար Գոշի անձը, դերակատարումը և ազգության շուրջ ծագած խնդիրները», 2. «Մխիթար Գոշի կյանքը և գործունեությունը» և 3. «Մատենագրական ժառանգությունը»: Կենսագրական տվյալների վերհանման համար հիմք են հանդիսացել մատենագրական երկերը, ժամանակագրություններն ու հիշատակարանները և արձանագրությունները: Արժեքավոր են հատկապես Մխիթար Գոշի ծննդյան թվականի վերաբերյալ հիմնավորումները և մատենագրական երկերի վերլուծությունները: Հանգամանակից ներկայացված են հայ մատենագրության մեջ եղած տվյալները և մինչ այժմ ուսումնասիրողների անդրադարձները:

Երկրորդ գլուխը՝ *«ԴԱՍԱՍՏԱՆԱԳՐՔԻ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)*, նվիրված է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» պատմաբանասիրական վերլուծությանը: Սույն գլխում հանգամանակից ներկայացված են «Դատաստանագրքի» հեղինակային պատկանելության, ստեղծման թվականի, աղբյուրների, գործադրության, խմբագրությունների, ձեռագրերի ու այլալեզու խմբագրությունների ու դրանց թարգմանությունների հետ կապված հարցերը: Այս գլխում հիմնավորված են հեղինակային պատկանելության ու պատվիրատուի հարցերը, և կատարվել են նոր ճշգրտումներ: Առաջին անգամ հիմնավորվել է «Դատաստանագրքի» ստեղծման թվականը երեք համաժամանակյա թվականների համադրությամբ և հայոց տոմարական եղանակների գործածմամբ: Ներկայացված է «Դատաստանագրքի»՝ հայկական գաղթավայրերում գործադրման պատմությունը:

Սույն գլուխը բաղկացած է վեց ենթագլխից՝ 1. ««Դատաստանագրքի» ուսումնասիրման պատմությունից», 2. ««Դատաստանագրքի» հեղինակը, պատվիրատուն և հորդորողը», 3. «Մխիթար Գոշի ապրած ժամանակաշրջանի արտացոլումը «Դատաստանագրքում»: Երկի ստեղծման ժամանակի շուրջ, 4. ««Դատաստանագրքի» աղբյուրների հարցը», 5. ««Դատաստանագրքի» կիրարկման խնդիրը» և 6. ««Դատաստանագրքի» բնագիրը: Այլալեզու խմբագրություններն ու թարգմանությունները և դրանց գործարկումը հայկական գաղթավայրերում»:

Երրորդ՝ **«ՂԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ» ԲՈՎԱՆՂԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԱՍՏԿԱԾԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ)** գլխում առաջին անգամ համապարփակորեն քննության է առնվել «Ղատաստանագրքի» եկեղեցաիրավական համակարգը՝ ներկայացնելով խնդրո առարկա հարցի շուրջ եղած ուսումնասիրությունները: Սույն գլխում սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համադրական վերլուծությամբ ցույց են տրվել համակարգի ամբողջական պատկերը, կառուցվածքը և վերլուծվել առանցքային բովանդակային խնդիրներ՝ ըստ իրավաբանական ճյուղերի, որոնք լուսաբանվել և արժարծվել են «Ղատաստանագրքում»: Վերջին՝ երրորդ գլուխը, բաղկացած է չորս ենթագլխից՝ 1. «Ղատաստանագրքի» կառուցվածքի շուրջ», 2. «Եկեղեցական և պետական իրավունքը: Ղատարանային համակարգը», 3. «Քաղաքացիական իրավունք» և 4. «Քրեական իրավունք»:

Եզրակացություններ: Սկզբնաղբյուրները և հրապարակի վրա եղած ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռել համակողմանի ուսումնասիրելու Մխիթար Գոշի կենսագրական տվյալները և «Ղատաստանագիրքը»: Ուստի թեմայի համալիր ուսումնասիրության արդյունքում արվել են հետևյալ **եզրակացությունները՝**

1. Մխիթար Գոշը համարվել է սուրբ իր ժամանակակիցների կողմից իր կենդանության օրոք, նրա շուրջ հյուսվել են ավանդություններ, որոնք պահպանվել են առ այսօր:
2. Մխիթար Գոշը ծնվել է մոտ 1133/1134 թթ., մահացել 79-80 տարեկանում, կուսակրոն քահանա է դարձել երիտասարդ տարիքում՝ մոտ 14 տարեկանում, Կիլիկիայի Սև լեռան վանքեր է մեկնել 1161/1162 թթ.՝ ևս մեկ անգամ վարդապետական աստիճան ստանալու, 1169 թ. արդեն հաստատվել է հայրենի Գանձակում, իսկ 1186 թ.՝ Գետիկ վանքում:
3. Մխիթար Գոշը էկումենիկ հայացքների կրող էր, ազգամիջյան համերաշխության և դավանական հանդուրժողականության ջատագով:
4. Մխիթար Գոշի մահվան թվականը՝ Հայոց 662 թվականը (իմա՝ 1213 թ.), հիմնավորվում է տոմարական եղանակների միջոցով՝ հիմք ընդունելով մի համառոտ ժամանակագրության տեղեկություն, որտեղ ՈՄԺԵ-ն համադրված է ՈԿԲ-ի հետ, և հայսմավուրքային աղբյուր, որտեղ մեհեկի Ե-ն համադրված է փետրվարի ԺԱ-ին:
5. Մխիթար Գոշի «Համառոտ մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայի» երկը վառ վկայությունն է, որ նա նաև իր ժամանակի խոշորագույն մեկնիչներից էր: Այս երկը շատ կարևոր է հայ մատենագրության համար, քանի որ հնարավորություն է տալիս վերականգնել հինկտակարանյան երկերի բնագրերը այն տեսքով, ինչպես որ դրանք պահպանվել էին հեղինակի ժամանակներում: Բացի կանոնադիր լինելուց՝ Գոշը նաև խոշոր մեկնիչ և հակաճառաբան է: Նրա հակաճառական և ջատագովական հայացքները

հանդիպում ենք «Թուղթ առ վրացիսն» երկում, որը արժեքավոր աղբյուր է նաև ժամանակաշրջանի մտայնության և տիրող իրավիճակի ուսումնասիրման տեսակետից:

6. Տոմարական երեք համաժամանակյա թվականների հիման վրա ճշգրտվել է, որ 1185 թ. Մխիթար Գոշը գրել է ավարտել է «Ղատաստանագիրքը», որն անմիջապես գործածության մեջ է մտել:
7. «Ղատաստանագրքի» ստեղծման պատճառները բազում էին՝ հասարակական, տնտեսական-սոցիալական, պետական-քաղաքական, նպատակակետերը՝ ևս, բայց առկա էր մեկ ընդհանուր պատճառ՝ ազգային ինքնության պահպանում, և մեկ ընդհանուր նպատակ՝ հայոց պետականության վերականգնում:
8. «Ղատաստանագիրքը» գրվել է Մխիթար Գոշի առաջարկությամբ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի բարձրագույն պատվերով, եղբայր Պողոսի և Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հորդորով և Հայր Հովսեփի հովանավորությամբ ու օժանդակությամբ:
9. Հիմնվելով Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի նամակի վրա՝ կարող ենք ընդօժել, որ Աստվածաշունչը «Ղատաստանագրքի» գլխավոր աղբյուրն է ու գործադրման հիմքը: Իրականում օրենսգիրքը մինչև 1193 թվականը համարվել է պաշտոնական, այսինքն՝ մինչև այն ժամանակ, երբ կաթողիկոսի կողմից հավանության է արժանացել:
10. «Ղատաստանագիրքը» վայելեց ժողովրդականություն՝ բխելով հասարակական-ազգային-պետական-եկեղեցական պահանջներից: Մխիթար Գոշը չի անտեսել արտաքին գործոնները, բայց շեշտը դրել է ներքին ուժերի համախմբման ու զորեղացման ճշմարիտ գաղափարի վրա՝ միմիայն ազգային դիրքերից ելնելով:
11. Հոգևոր-եկեղեցական իր գործունեությամբ Մխիթար Գոշը հաստատում էր ժողովրդական եկեղեցին, որը պիտի դառնար տիրապետող դասակարգի կազմակերպություն-պետություն, պետական գաղափարախոսության կրող ու հաստատություն, պետական համակարգ, պետության կրող պետականության բացակայության պայմաններում:
12. «Ղատաստանագիրքը» գործադրվել է Լվովում, Կամենեց-Պոդոլսկում, Ղրիմում, Աստրախանում, Մոզդոկում, Ղզլարում, Նոր Նախիջևանում, Գրիգորիոպոլում, Տրանսիլվանիայում, Սուդանի և Հնդկաստանի հայկական գաղթավարերում:
13. «Ղատաստանագրքի» աղբյուրներն են՝ Աստվածաշունչը, «Կանոնագիրք հայոց» ժողովածուն, բնավորական օրենքը, այն է՝ սովորութեական իրավունքը, քրիստոնյա այլ ազգերի օրենքները, եկեղեցու հայրերի և վարդապետների երկերը, որպես հավելում՝ այն մահմեդական օրենքները, որոնք քաղված են այլ օրենքներից և համապատասխանում են Ավետարանին:

Հողվածների քննությունը ցույց է տալիս, որ Գոշը որպես աղքատի գործածել է նաև Դավիթ Ավավկատորու «Կանոնական օրինադրությունը», ինչի մասին չի հիշատակում:

14. «Դատաստանագիրքն» ունի այլ իրավական համակարգ՝ եկեղեցաիրավական՝ ըստ միջնադարյան իրավունքի՝ հակառակ այն ուսումնասիրողների տեսակետների, որոնք եկեղեցական իրավունքը չեն ներկայացրել որպես առանձին ճյուղ և առաջնորդվել են արդի իրավական համակարգով՝
- Եկեղեցական և պետական իրավունք: Դատարանային համակարգը՝
 - ✓ Եկեղեցական իրավունք: Ամուսնաընտանեկան իրավանորմեր,
 - ✓ Պետական իրավունք,
 - Քաղաքացիական իրավունք,
 - Քրեական իրավունք:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Միրզոյան Ն., Մխիթար Գոշի կյանքը և ստեղծագործությունը, «Հայ աստվածաբան» գիտական հոդվածների ժողովածու (ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ), ԵՊՀ հրատ., Գիրք Գ, Երևան, 2009, 50-64:
2. Միրզոյան Ն., Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»՝ որպես ժամանակաշրջանի արծագանք: Ստեղծման պատճառներն ու նպատակները, «Գարուն», «Նշանակ» հրատ., Երևան, 2011, թիվ 7-8, էջ 12-17:
3. Միրզոյան Ն., Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» ստեղծման թվականի հարցի շուրջ, «Տարեգիրք» (ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ), թիվ 2, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 94-101:
4. Միրզոյան Ն., Եկեղեցական իրավունքն ըստ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», «Հայ աստվածաբան» գիտական հոդվածների ժողովածու (ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ), Գիրք Ե, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 7-20:
5. Միրզոյան Ն., Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» ստեղծման պատճառների շուրջ, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, Երևան, 2013, թիվ 4-6 (37), էջ 154-158:
6. Միրզոյան Ն., Մխիթար Գոշի մատենագրական ժառանգության շուրջ, «Ակունք» (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 1 (11), Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 60-79:

МИРЗОЯН НАРИНЕ ЗОРИКОВНА
МХИТАР ГОШ И ЕГО «СУДЕБНИК»
(«ГИРК ДАТАСТАНИ»)

РЕЗЮМЕ

диссертационной работы на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 25.00.01 «Теория и история религии (религиоведение)»

Защита диссертации состоится 24-го декабря 2015 г., в 12:00 часов на заседании специализированного совета 068 в Ереванском государственном университете.

Адрес: г. Ереван 0025, Абовяна, 52, ЕГУ, 6-ой корпус, актовый зал.

Данная диссертация, представляемая к публичной защите, посвящена жизни и деятельности Мхитара Гоша, выдающегося представителя одного важного и малоизученного периода армянской культуры, и изучению его шедеврального сочинения «Книга судебных правил» («Гирк Датастан») (наиболее распространенное в арменоведении название – «Датастангирк» («Судебник»)), с новаторским и всесторонним освещением, а также с переоценкой ранее сформировавшихся подходов и представлением других точек зрения. Выбрав изучение «Судебника» в качестве оси, диссертант дает полное и всестороннее описание литературного наследия Гоша, с разделением летописания на различные ветви и в хронологической последовательности. Параллельно с проведением историко-филологического и церковно-правового анализа, детально и в хронологическом порядке представлены рукописи, изучения и публикации всех сочинений Мхитара Гоша. Всестороннее изучение литературного наследия Мхитара Гоша позволило восстановить и оцифровать особые биографические эпизоды, подчеркивая роль Мхитара Гоша и его политико-правовые, экономические, социально-общественные и богословские взгляды. В настоящем исследовании составлена также церковно-правовая система «Судебника» в соответствии с средневековым армянским правом.

Цель диссертации – представить Мхитара Гоша как крупнейшего представителя армянского летописания исследуемого периода и лица, внесшего большой вклад в средневековое армянское право, а «Судебник» – как шедевр армянской юридической и богословской мысли. Актуальность темы обусловлена ее не полной изученностью с точки зрения научного познания.

Для изложения материала диссертации были выбраны следующие методы исследования: историко-филологический, богословский и сравнительно-сопоставительные и системные методы юридического исследовательского анализа, диссертация составлена по принципу изложения беспристрастного исследования. Основными методами исследования стали также новейшие календарные и святцевые способы.

Исследование может иметь также научно-практическое значение: в свете его положений могут быть изучены различные вопросы, касающиеся Мхитара Гоша и его сочинений. Отдельные положения диссертации могут быть полезны для армянского церковного права, с точки зрения изучения армянских колоний, и представляют большой

интерес для вузовской образовательной системы, в рамках истории, филологии, богословия, юриспруденции, церковноведения, обществоведения, медицинской науки и этнографии.

Итак, первоисточники и имеющиеся на этом поприще исследования позволили всесторонне изучить биографические данные Мхитара Гоша и его «Судебник», который является многоотраслевым трудом, изученным в арменоведении много, но не глубоко, и все еще нуждается в бесконечном исследовании. Хотя «Судебник» был проанализирован исследователями с историко-филологической точки зрения, некоторые вопросы все еще не полностью разъяснены, а некоторые вопросы необходимо освещать по-новому.

В введении диссертации обоснованы актуальность исследуемой темы, представлены основные цели, задачи, научная новизна, практическая значимость работы, а также приведен список использованных источников и литературы.

При изложении первой главы – **«ЖИЗНЬ, ДЕЯТЕЛЬНОСТЬ И ЛЕТОПИСНОЕ НАСЛЕДИЕ МХИТАРА ГОША»** – диссертант пользовался в основном первоисточниками, параллельно представляя также уже проведенные исследования. Данная глава посвящена биографии Мхитара Гоша и его заслуге в летописании. Для выявления биографических сведений в качестве основы были использованы летописные сочинения, хроники, дневники и записи. Детально изложены имеющиеся в армянском летописании данные и выполненные до настоящего времени исследования.

Вторая глава – **«ИЗ ИСТОРИИ ИЗУЧЕНИЯ «СУДЕБНИКА» (ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ)** – посвящена историко-филологическому анализу «Судебника» Мхитар Гоша. В этой главе детально изложены вопросы, связанные с авторской принадлежностью, датой создания, источниками, применением «Судебника», его редакциями, рукописями, а также иноязычными редакциями и их переводами. В этой главе обоснованы вопросы авторской принадлежности и заказчика, сделаны новые уточнения. Впервые была обоснована дата создания «Судебника» путем сопоставления трех синхронных дат и применения армянских календарных способов. Представлена история применения «Судебника» в армянских колониях.

В третьей главе – **«СОДЕРЖАНИЕ «СУДЕБНИКА» ПО ЦЕРКОВНО-ПРАВОВОЙ СИСТЕМЕ (БОГОСЛОВСКИЙ И ПРАВОВОЙ АНАЛИЗ)** – впервые проведено всеобъемлющее изучение церковно-правовой системы «Судебника», представлены исследования по вопросу, являющемуся предметом изучения. В данной главе диссертант показывает целостную картину и структуру системы и проводит анализ ключевых содержательных проблем по правовым ветвям, освещенным и приведенным в «Судебнике».

В конце исследования даны основные выводы, сделанные диссертантом, а также представлены приложение, аббревиатуры и список использованной литературы.

NARINE ZORIKI MIRZOYAN
MKHITAR GOSH AND HIS “LAW CODE”
(“GIRK DATASTANI”)

SUMMARY

of dissertation for the academic degree of Candidate of Historical Sciences in specialty
25.00.01 “Theory and history of religion (religious studies)”

Defence day: 24.12.2015. at 12:00pm at the session of the Specialized Council 068 under in
Yerevan State University.

Address: Republic of Armenia, 0025, Yerevan, 52, Abovyan str., YSU, 6th corpus of
assembly room.

This thesis being presented for public defence is devoted to the study of life and activity of Mkhitar Gosh, a prominent representative of an important and little-studied period of Armenian culture, and his masterpiece, i.e. “The Book of Judgment” (more known in Armenology as “Datastanagirk” / “Law Code”). The thesis covers the topic in a comprehensive and new way, reevaluates earlier formed approaches and presents other viewpoints. Having the study of the “Law Code” as the axis of the thesis, the author provides a complete and comprehensive description of the literary heritage of Mkhitar Gosh, dividing annal writing into different branches in the chronological sequence. The historical and philological, ecclesiastical and legal analyses made in the thesis are accompanied by the manuscripts, researches and publications of all the works of Mkhitar Gosh presented thoroughly in the chronological order. The comprehensive study of the literary heritage of Mkhitar Gosh allowed to restore and digitize special biographic episodes, emphasizing the role of Mkhitar Gosh and his politico-legal, economic, social and public, as well as theological views. The ecclesiastical and legal system of the “Law Code” in compliance with the medieval Armenian law is composed in this thesis.

The aim of the thesis is to present Mkhitar Gosh as an eminent representative of the Armenian annal writing of the period being studied and as a person who made a major contribution to the medieval Armenian law on the one hand, and the “Law Code” as a masterpiece of the Armenian juridical thought on the other hand.

The following methods have been used in the thesis: historical and philological, theological and comparative, contrastive and system juridical research analysis. The dissertation is written adhering to the principle of carrying out an impartial research. Among the main methods used in the research are latest calendar and holiday calendar methods.

This research may also have scientific and practical value: various issues related to Mkhitar Gosh and his works can be studied in the light of its provisions. Some provisions of the dissertation may be useful for the Armenian ecclesiastical law, from the point of view of Armenian colonies, and are of great interest for the higher educational system, in the framework of History, Philology, Theology, Jurisprudence, Ecclesiology, Social science, Medical Sciences and Ethnography.

Thus, the primary sources and research works carried out in the relevant field allowed to

comprehensively study the biographical data of Mkhitar Gosh and his “Law Code”, which is a diversified work that has been studied in the Armenology many times but not deep enough, and still needs to be endlessly studied. Though the “Law Code” was analyzed by researchers from the historical and philological points of view, yet some issues aren’t completely clarified, and other issues need to be covered in a new way.

The introduction to the dissertation presents the topicality of the research theme, major aims, tasks, the scientific novelty, practical value of the thesis and contains the list of used sources and literature.

When writing the first chapter of the thesis entitled ***“THE LIFE, ACTIVITY AND ANNALISTIC HERITAGE OF MKHITAR GOSH”*** the author used mainly primary sources and simultaneously presented other research works. This chapter is devoted to the biography of Mkhitar Gosh and his merit in the writing of annals. To reveal biographic data annalistic essays, chronicles, memorials and records were used as a basis. The available data of the Armenian annals and relevant research works carried out so far are thoroughly presented in this chapter.

The second chapter entitled ***«FROM THE HISTORY OF THE STUDY OF THE “LAW CODE” (HISTORICAL AND PHILOLOGICAL ANALYSIS)”*** – is devoted to the historical and philological analysis of the “Law Code” of Mkhitar Gosh. This chapter includes a detailed description of issues related to the authorship, date of creation, sources, application of the “Law Code”, its editions, manuscripts, as well as foreign editions and their translations. Issues related to the authorship and the person who ordered the book are substantiated, new specifications are made. The precise date of creation of the “Law Code” has been established for the first time through comparing three synchronous dates and application of Armenian calendar methods. The history of the application of the “Law Code” in the Armenian colonies is also presented in this chapter.

The third chapter entitled ***«THE CONTENT OF THE “LAW CODE” ACCORDING TO THE ECCLESIASTIC AND LEGAL SYSTEM (THEOLOGICAL AND LEGAL ANALYSIS)”*** presents a comprehensive study of the ecclesiastic and legal system of the “Law Code” for the first time, and provides a description of research works conducted on the issue which has been made the object for this study. In this chapter the author shows the whole picture and structure of the system and analyzes the key issues related to the content, according to the legal branches covered and touched upon in “The law code”.

At the end of the thesis the main conclusions made by the author are stated and the appendix, as well as the list of abbreviations and used literature are given.

